«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2025 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (20 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Հայոց պատմություն բաժնում ներառված է 4 թեմա, յուրաքանչյուր շրջափուլից՝ մեկական թեմա՝ բաղկացած երկու հարցից: Ընտրե՛ք թեմաներից ցանկացած <u>երկուսը</u> և պատասխանե՛ք հարցերին:

<u>ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ</u>

ԹԵՄԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Թվարկեք և բացատրեք Արտաշես Ա թագավորի իր իշխանությունը ամրապնդելու և օրինական դարձնելու երկու քայլեր:

Արտաշես Առաջինը /Ք.ա.189-160 թթ/ Մեծ Հայք էր եկել որպես Սելևկյան զորավար և գահընկեց էր արել օրինական արքա Երվանդ վերջինին, ուստի Մեծ Հայքի անկախացումից հետո ուներ սեփական իշխանության օրինականության ամրապնդման խնդիր: Այդ նպատակով Արտաշեսը հայտարարեց, որ ինքը Երվանդական տոհմի ներկայացուցիչ է և իր իշխանությունը օրինական է, քանի որ Հին աշխարհում մարդու ծագումը շատ կարևոր էր պետական բարձր պաշտոն զբաղեցնելու համար: Իր իշխանության օրինականացման երկրորդ քայլ կարելի է համարել հայ ժողովրդի սիրելի դիցուհու՝ Անահիտի տաճարի կառուցումը և նախկին թագավորների արձանների տեղադրումը այս տաճարում, ինչը թագավորական իշխանությանը, որը այդ պահին գտնվում էր Արտաշեսի ձեռքին, տալիս էր աստվածային բնույթ:

2. Բացատրեք Արտաշես Ա թագավորի երկու բարեփոխում, որոնցից մեկը ուղղված էր երկրի ներսում հասարակական համերաշխության ամրապնդմանը, մյուսը՝ պաշտպանունակության բարձրացմանը:

Արտաշես Ա-ն կատարել է երկիրը ամրապնդող բազմաթիվ բարեփոխումներ, որոնց մեջ առանձնանում են հողային և ռազմական բարենորոգումները:

Մեծ Հայքում հասարակության հիմնական խավերից մեկի՝ ազատ համայնականների տիրույթները պարբերաբար հարձակումների էին ենթարկվում և յուրացվում մյուս խավի՝ կալվածատերերի կողմից: Այս երկու խավերի վերաբերմունքը արքայի նկատմամբ չափազանց կարևոր էին Մեծ Հայքի համար, քանի որ ազատ համայնականները հիմնական հարկատուներն էին և զորակոչվում էին հետևակ, իսկ կալվածատերերը ունեին լայն հնարավորություններ և ծառայում էին հեծելազորում: Արտաշեսը պետք է գտներ լուծում, որը կօգներ բավարարել երկուսի շահերն էլ: Այդ նպատակով Արտաշեսը հրամայել ամբողջ երկրով տեղադրել հողաբաժան սահմանաքարեր, որոնք կհաստատեին համայնականների տիրույթների պատկանելիությունը: Միևնույն ժամանակ մինչ այդ պահը կատարված զավթումները թողնվեցին կալվածատերերին, իսկ սա իր հերթին օգնեց ձեռք բերել նաև նրանց վստահությունը:

Երկրի պաշտպանության բարելավմանը ուղղված կարևոր ռեֆորմ էր բանակի բաժանումը չորս մասերի ըստ երկրի կողմերի և վստահելի մարդկանց նշանակումը զորավարների պաշտոններում: Այս բարեփոխումը էականորեն բարձրացրեց պետության հնարավորությունները տարբեր կողմերից անակնկալ հարձակումների դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Թվարկեք 1254 թ.հայ-մոնղոլական դաշինքի կետերը, բացատրեք դրա դրական ու բացասական կողմերը Կիլիկյան Հայաստանի համար:

Ըստ 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի կողմերը պայմանավորվում էին պատերազմի ժամանակ միմյանց օգնել: Կիլիկյան Հայաստանը օգնում է մոնղոլներին Միջագետքը, Սիրիան ու Պաղեստինը գրավելու գործում, իսկ մոնղոլները պարտավորվում են պաշտպանել Կիլիկյան Հայաստանն Իկոնիայի, Եգիպտոսի և շրջակա մյուս պետությունների հարձակումներից: Միմյանց միջև հաստատվում են հավերժական բարեկամություն և խաղաղություն: Մոնղոլական պետությունը իր կայսրության ամբողջ տարածքում հայոց եկեղեցուն շնորհում էր անձեռնմխելիություն և բոլոր տեսակի հարկերից ազատման արտոնություններ: Այս պայմանագիրը թույլ էր տալիս էր Կիլիկիայի հայկական պետությանը ժամանակավորապես հեռու մնալ մոնղոլական հարձակումներից, որոշակի արտոնություններ տալիս հայկական եկեղեցուն և հայ առևտրականներին հնարավորություն էր տալիս առևտուր անել մոնղոլական հսկա կայսրության տարբեր մասերում, սակայն ուներ նաև էական վտանգներ: Կիլիկյան Հայաստանի հարևան երկրները, որոնք նախատեսում էին նվաճել մոնղոլները, վերջիններիս անհաջողության դեպքում փորձելու էին պատասխան հարված հասցնել հենց Կիլիկիային: Բացի այդ անհայտ էր, թե տարածաշրջանում ամրապնվելու դեպքում որքանով մոնղոլները կհետևեին պայմանագրի կետերի կատարմանը:

2. Բացատրեք Կիլիկիայի հայկական թագավորության անկման մեկ արտաքին և երկու ներքին պատճառ:

Կիլիկիայի հայկական պետությունը կործանվեց 1375 թ.: Կործանման պատճառները բազմաթիվ էին: Արտաքին պատճառներից էին՝ տարածաշրջանում իրադրության փոփոխությունը, մամլուքների արշավանքները, եվրոպական երկրների օգնության սին խոստումները և այլն: Ներքին պատճառներն էին՝ տնտեսական անկումը, 1268 թ. երկրաշարժը, ունիթորների և հակաունիթորների պայքարը և այլն:

Կիլիկիայի շուրջ արտաքին իրավիճակը բավականին արագ փոխվում էր՝ խաչակրաց շարժումը, որը իր վրա էր հրավիրել տարածաշրջանի մահմեդական երկրների ուշադրությունը, մարել էր, մոնղոլները՝ Կիլիկիայի երբեմնի դաշնակիցները, չկարողանալով հաղթահարել մամլուքների դիմադրությունը, սկսել էին հարձակումներ ձեռնարկել Կիլիկիայի ուղղությամբ: Կիլիկյայի համար հատկապես վտանգավոր էին մամլուքները, որոնք արևևելյան միջերկրածովում առևտրի մենաշնորհ ստանալու համար պարբերաբար փորձում էին տիրանալ Կիլիկիայի նավահանգիստներին: Կիլիկիայի հայկական պետությունը կտրուկ թուլացավ 1266 թ. Մառի ճակատամարտում կրած պարտությունից հետո: Դրանից ընդամենը երկու տարի անց Կիլիկիան ցնցվեց նաև ներսից: Տեղի ունեցած երկրաշարժը զգալի վնասներ հասցրեց երկրի տնտեսությանը, ահռելի էին նաև մարդկային զոհերը:

Կարող ենք բացատրել նաև այլ պատճառներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Նկարագրեք 1918 թ.Մայիսյան հերոսամարտերի երկու ճակատամարտեր, բացատրեք դրանցում հայկական բանակի հաղթանակի երեք պատճառ:

Ռուսական բանակի հեռանալուց հետո 1918 թ. գարնանը Այսրկովկասը թուրքական հարձակումից պաշտպանելու բեռը ընկավ հիմնականում հայկական զինուժի վրա: Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո թուրքական զորքերը մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատը: Հայկական զինուժը թուրքերին դիմավորեց Սարդարապատ կայարանի մատույցներում: Սարդարապատի ճակատամարտի հրամանատարությունը հանձն առավ գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը: Առաջին իսկ օրը հրետանային համազարկից հետո հայկական բանակը հակահարձակման անցավ և հետ գրավեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Ծանր մարտերից հետո թուրքերը նահանջեցին Արաքս կայարան, ապա համախմբելով ուժերը՝ կրկին գրոհի անցան: Մի քանի օր տևած կռիվների արդյունքում թուրքական 15000-ոց բանակը գլխովին ջախջախված փախուստի դիմեց դեպի Ալեքսանդրապոլ:

Բաշ Ապարանում թուրքական բանակի 9-րդ դիվիզիայի նպատակն էր արագ երթով ոչնչացնել հայկական զինված ուժերը, շրջանցել Սարդարապատի զորախումբը թիկունքից, աքցանի մեջ առնել հայկական բանակն ու ոչնչացնել: Թուրքերի մտահղացումը կռահելով՝ ընդհանուր հրամանատար գեներալ Սիլիկյանը Բաշ-Ապարան ուղարկեց Դրաստամատ Կանայանին 6000-ոց զորախմբով: Տեղի բնակչության օգնությամբ հաջողվեց կասեցնել թուրքերին նաև Բաշ-Ապարանում:

Դժվարին իրավիճակում կային հայկական զինված ուժերի հաջողություններին նպաստող մի շարք գործոններ:

Մայիսյան հերոսամարտերի հաղթանակներում շատ մեծ էր ցեղասպանությունից փրկված արևմտահայության դերը: Թուրքական վայրագությունները սեփական մաշկի վրա զգացած հայերը պատրաստ էին ամեն ինչ թուրքական բանակի դեմ պայքարում: Հատկապես մեծ էր թուրքերի դեմ պայքարում ռազմական փորձ ունեցող կամավորների դերը:

Առաջին աշխարհամարտում Ռուսական կայսրության բանակում կային բազմաթիվ հայ սպաներ, որոնց մի մասը մնաց և մասնակցեց Հայաստանի պաշտպանությանը օրհասական պահին, Բեկ Փիրումյանները, Ն. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը և ուրիշներ իրենց ծանր կշիռը ունեին հայկական բանակի հաղթանակների գործում:

Առաջին աշխարհամարտում Ռուսական կայսրության բանակում գործող նախկին կամավորական ջոկատները, որոնք ընկան Հայկական կորպուսի հիմքում, հայական բանակի ամենամարտունակ և փորձառու ստորաբաժանումներից էին հակաթուրքական պայքարի իրենց բազմամյա փորձով:

2. Ներկայացրեք Հայաստանի Առաջին հանրապետության 2 ներքին խնդիրներ, գնահատեք դրանց լուծման ուղղությամբ կատարված քայլերի հաջողությունը:

Հայաստանի նորանկախ հանրապետությունը ուներ բազմաթիվ չլուծված ներքին խնդիրներ:

Դրանցից էին սովը, մեծաթիվ գաղթականները, տնտեսական ճգնաժամը և այլն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձեց սովը նաև հաղթահարել արտաքին օգնության միջոցով: Դեպի ԱՄՆ ուղևորված պատվիրակությունը Հովհ. Քաջազնունու գլխավորությամբ, որը այնտեղից բերեց բավականին մեծաքանակ օգնություն սննդամթերքի տեսքով: Լուծումը, իհարկե, ժամանակավոր էր, սակայն ամենադժվար փուլում էականորեն թեթևացրեց բնակչության վիճակը և հնարավորություն տվեց կառավարությանը երկարաժամկետ հեռանկարում խնդիրը հաղթահարող ծրագրեր մշակել:

Նույն կերպ կարելի է բացատրել ցանկացած այլ պատճառ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ներկայացրեք Հայաստանի խորհրդայնացման ընթացքը, բացատրեք դրա երկու պատճառ։

1920 թ աշնանը Հայաստանի Հանրապետության վիճակը խիստ ծանրացավ։ Թուրք-հայկական պատերազմի հետևանքով երկրում առաջացավ սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ։ Հատկապես ծանրացավ գաղթականների վիճակը։

Իրադրությունը էլ ավելի լարվեց նոյեմբերին, դա հարկադրեց Համո Օհանջանյանի գլխավորած կառավարության հրաժարականը։ Նոյեմբերի 24-ին Հայաստանի խորհրդարանը ստեղծում է նոր կառավարություն Սիմոն Վրացյանի գլխավորությամբ։ Սիմոն Վրացյանի կառավարությունը փորձում է բարելավել հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ։ Սակայն նոյեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանին արված առաջարկը չի ընդունվում։ Լեգրանը հայտարարում է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի խորհրդայնացման ուղի է վերցրել։ Նույն օրը հայ հեղկոմը Ղազախից անցնում է Իջևան և այստեղ Հայաստանի ժողովրդին ուղղված հովարտակ հրատարակում, որով Հայաստանը հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն։ Հայտնվելով թուրքական և ռուսական ճնշման տակ, Հայաստանի Հանրապետությունը հարկադրված է լինում տեղի տալ։

Նույն օրը նրա ներկայացուցիչներ Դրոն և Համբարձում Տերտերյանը բանակցություններ են սկսում Լեգրանի հետ։ Երկու օր տևած բանակցություններն ավարտվում են դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանը հայտարարվում է խորհրդային հանրապետություն։

Հայ-թուրքական 1920 թ. պատերազմում պարտություն կրած ՀՀ-ն չկարողացավ դիմադրել բոլշևիկների Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականությանը։ Մյուս կողմից քաղաքացիական պատերազմում հաղթող բոլշևիկյան կառավարությունը վերադարձել և խորհրդայնացրել էր Ադրբեջանը, միևնույն ժամանակ նպատակադրվելով թեկուզ զենքի ուժով Հայաստանում, հետագայում նաև Վրաստանում հաստատել խորհրդային կարգեր։

2. Ներկայացրեք և բացատրեք խորհրդային շրջանում Հայաստանի երկու հաջողած և մեկ ձախողված ոլորտ։

Հայաստանը խորհրդայնացվել է 1920 թ. վերջին և չնայած բռնի գործընթացին և անկախության կորստին, ունեցել ենք նաև որոշ ձեռքբերումներ։

Հաջողված կարող ենք համարել օրինակ՝ հանրակրթության կազմակերպումը, գիտությունը, արդյունաբերությունը…

Հանրակրթությունը հաջողված ենք համարում քանի որ /բերել փաստարկեր, հիմնավորել/…

Չնայած որոշակի հաջողությունների, ունենք նաև ձախողումներ, օրինակ՝ գյուղատնտեսությունը …

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (12 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Համաշխարհային պատմության բաժնում հարկավոր է պատասխանել <u>երկու</u> առաջադրանքի: Առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա փաստերով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա

Նկարը Մեյձիի դարաշրջանի ճապոնացի նկարիչ Կասայ Տորաջիրոյի՝ քրոմոլիթոգրաֆն[1] է, ստեղծված 1904թ.: Վերնագրված է «Ճշմարիտ զեկույց Լյուշունի մեծ ծովային ճակատամարտի մասին. թիվ երկու»: Ներքևում գրված է ռուսական ռազմանավերի կորուստը:

Պատկերված է Պորտ Արթուրի (չին.՝ Լյուշուն) 1904 թվականի փետրվարի 8–9-ը տեղի ունեցած ճակատամարտը, որը նշանավորում է ռուս-ճապոնական (1904-1905թթ.)պատերազմի սկիզբը: Ճապոնական ռազմանավերի գիծը, որը տեղակայված է աջ կողմում, կրակում և խորտակում է ձախ կողմում գտնվող ռուսական ռազմանավերը:

[1] Քրոմոլիթոգրաֆիան (Chromolithography) բազմագույն տպագրության տեխնիկա է, որը զարգացել է XIX դարի կեսերին: Այն լիթոգրաֆիայի (քարատպության) զարգացած տարբերակն է, որտեղ յուրաքանչյուր գույն տպվում է առանձին քարե կամ մետաղական տպատախտակի միջոցով:

Աղբյուր Բ

Հատվածներ Ռուսաստանի Նիկոլայ II ցարի՝ 1905թ. հոկտեմբերի 17-ի «Պետական կարգի կատարելագործման մասին» հրովարտակից.

1. Շնորհել բնակչությանը քաղաքացիական ազատության անսասան սկզբունքները՝ անձի անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, հավաքների և միությունների ազատություն:
2. ...Դումային[2] մասնակցությանը ներգրավել...բնակչության այն դասերը, որոնք ներկայումս բոլորովին զրկված են ընտրական իրավունքից...
3. Որպես անսասան կանոն հաստատել՝ ոչ մի օրենք չի կարող ուժ ստանալ առանց Պետական դումայի հավանության:

   Կոչ ենք անում Ռուսաստանի բոլոր հավատարիմ զավակներին՝ հիշել իրենց պայքարը հայրենիքի համար, օգնել այս չլսված խռովությունը դադարեցնելու և մեզ հետ միասին լարել ողջ ուժերը՝ հարազատ հողի վրա հանգստությունն ու խաղաղությունը վերականգնելու համար:

Հարց 1. Օգտվելով աղբյուր Ա-ի, աղբյուր Բ-ի տեղեկություններից և Ձեր գիտելիքներից բացատրեք թե ի՞նչ պատճառահետևանքային կապ եք տեսնում ռուս-ճապոնական պատերազմի և Նիկոլայ II ցարի՝ 1905թ. հոկտեմբերի 17-ի «Պետական կարգի կատարելագործման մասին» հրովարտակի միջև:

Շնորհիվ թռիչքաձև զարգացման Ճապոնիան ստեղծել էր մարտունակ բանակ, որի աղյունքում վարում էր ծավալապաշտական քաղաքականություն:1904 թվականի փետրվարի 8–9-ը ռուս-ճապոնական ռազմանավերի բախումը՝ Պորտ Արթուրի (չին.՝ Լյուշուն) մոտ նշանավորեց ռուս-ճապոնական պատերազմի սկիզբը (Տես աղբյուր Ա-ն): Արդունքում՝ 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմում Ճապոնիան հաղթեց: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանում կար ներքին հակասություններ, Նիկոլայ II ցարի կառավարման նկատմամբ դժգոհություններ, որոնք առավել սրվեցին Ճապոնիային պարտվելուց հետո՝ հանգեցնելով Ռուսաստանի առաջին հեղափոխությանը, որը սկսվեց 1905թ. հունվարի 9-ին Ս. Պետերբուրգում խաղաղ ցույցի գնդակոծմամբ: Հեղափոխությունը ուղեկցվում էր ցարական կառավարության և քաղաքացիների միջև արյունալի ընդհարումներով, սակայն գրանցվեց նաև դրական արդյունք՝ Նիկոլայ II ցարը 1905թ. հոկտեմբերի 17-ին հրապարակեց «Պետական կարգի կատարելագործման մասին» հրովարտակը, որտեղ տերության բոլոր քաղաքացիներին խոստանում էր ժողովրդավարական ազատություններ՝ անձի. խոսքի հասարակական կազմակերպությունների, կրոնի: Հրավիրվում էր Խորհրդարան՝ Պետական դումա: Այսինքն Ռուսաստանը գնում էր սահմանադրական միապետության ուղով: (Տես աղբյուր Բ-ի «Պետական կարգի կատարելագործման մասին» հրովարտակի 1,2,3-րդ կետերը):

[2] Դուման պետական կամ տեղական խորհրդատվական օրենսդիր մարմին է Ռուսաստանում:

Հարց 2. Օգտվելով աղբյուր Ա-ից և Ձեր գիտելիքներից՝ ներկայացրեք, բացատրեք թե ինչու՞ և ինչպե՞ս է Ճապոնիան XIX դարի վերջ և XX դարի սկզբին դարձել Արևելքի առաջին արդիականացած երկիրը: Ներկայացրեք արդիականացման արդյունքում առնվազն մեկ ներքին, մեկ արտաքին ձեռքբերում/հաղթանակ:

Միջնադարի ավարտին Ճապոնիան ինքնամեկուսացած <<փակ պետություն>> էր: Սակայն, XVIII դարի վերջերին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նավերը հաճախակի էին հայտնվում ճապոնական ափերին: Նրանց մուտքը երկիր Ճապոնիայում իշխող Տոկուգավա սյոգունները փորձում են խոչընդոտել, սակայն երկար դիմակայել հնարավոր չէր: 1854թ. ԱՄՆ-ն հարկադրեց Ճապոնիային կնքել պայմանագիր, որով նրանց տրվեց առևտրային արտոնություններ և բացվեց երկու նավահանգիստներ: Շուտով անիրավահավասար պայմանագրեր կնքվեցին նաև Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ: Ճապոնիան զրկվեց որոշակի ինքնուրույնությունից, օտար ապրանքների մրցակցությունից տուժում էր ճապոնական տնտեսությունը: Բնականաբար սկսվեց դժգոհություն Տոկուգավաների նկատմամբ, որը հանգեցրեց 1867-1868թթ. հեղափոխության: Պետության ղեկավարումը վերադարձվեց կայսերական ընտանիքին, 15-ամյա Մուցուհիտոն հռչակվեց կայսր, ստացավ Մեյձի <<Լուսավորյալ կառավարիչ>> անունը: Սկսվեց <<Մեյձիի դարաշրջանը>>, Ճապոնիան բռնեց արդիականացման ճանապարհը: 1889թ. ընդունված հիմնական օրենքով երկիրը դարձավ սահմանադրական միապետություն: Կայսրը ըստ Սահմանադրության համարվում էր սրբազան և անձեռնմխելի, իսկ քաղաքացիներին տրվեց ժողովրդավարական ազատություններ: Հեղափոխության շնորհիվ սինտոյականությունը դարձավ պետական կրոն: Դրա ուսմունքի համաձայն՝ կայսրը իր իշխանությունը ստացել է արև աստծուց:

Ճապոնիան զարգացավ թռիչքաձև՝ դառնալով Արևելքի առաջին արդիականացած երկիրը: Արդիականացման արդունքում արձանագրվեցին հետևյալ ձեռքբերումները:

Ներքին՝

- դասային հավասարության հաստատում:
- Մենատիրությունների առաջացում:
- Ազգային տարադրամի՝ իենի ստեղծում, դրամատների բացում:
- Համազգային շուկայի ստեղծում: Ճապոնական ապրանքները սկսեցին արտահանվել տարբեր երկրներ:
- Կրթական համակարգի զարգացում եվրոպական օրինակով:
- Մարտունակ բանակի ստեղծում, (Տես աղբյուր Ա-ն):

Արտաքին՝

- Ազատվեց 15 անիրավահավասար պայմանագրերից:
- Ծավալապաշտական քաղաքականություն՝ հաղթեց 1894–1895 թթ. չին–ճապոնական և 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմներում (Տես աղբյուր Ա-ն):
- Դարձավ գաղութային տերություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա.

Հատվածներ ԱՄՆ-ում Խորհրդային Միության դեսպան Նիկոլայ Նովիկովի գրությունից գրված՝ 1946 թվականի սեպտեմբերի 27-ին, որը հայտնի է որպես «Նովիկովի հեռագիր»: Հեռագիրն ուղղված է Խորհրդային Միության ղեկավարությանը:

ԱՄՆ արտաքին քաղաքականությունը, որն արտացոլում է ամերիկյան մենաշնորհային կապիտալի իմպերիալիստական միտումները, հետպատերազմյան շրջանում բնութագրվում է համաշխարհային տիրապետության ձգտումով: … Այս արտաքին քաղաքականության ծառայության են դրված ամերիկյան դիվանագիտության, բանակի, ավիացիայի, նավատորմի, արդյունաբերության և գիտության բոլոր ուժերը:

…ԽՍՀՄ-ը ներկայումս ունի շատ ավելի ամուր միջազգային դիրքեր, քան նախապատերազմյան շրջանում: Խորհրդային զենքի պատմական հաղթանակների շնորհիվ խորհրդային զինված ուժերը տեղակայված են Գերմանիայի և նախկին թշնամի այլ երկրների տարածքում՝ երաշխիք տալով, որ այդ երկրները կրկին չեն օգտագործվի ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Նախկին թշնամի երկրներում, ինչպիսիք են Բուլղարիան, Ֆինլանդիան, Հունգարիան և Ռումինիան, ժողովրդավարական սկզբունքներով նրանց վերակազմավորման արդյունքում ստեղծվեցին վարչակարգեր, որոնք իրենց առջեւ խնդիր դրեցին ամրապնդել և պահպանել բարեկամական հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Կարմիր բանակի կողմից կամ դրա օգնությամբ ազատագրված սլավոնական երկրներում՝ Լեհաստանում, Չեխոսլովակիայում և Հարավսլավիայում նույնպես ստեղծվեցին և ամրապնդվեցին ժողովրդավարական վարչակարգեր՝ հարաբերություններ պահպանելով Խորհրդային Միության հետ բարեկամության և փոխօգնության պայմանագրերի հիման վրա:

Աղբյուր Բ.

Հատվածներ Խորհրդային միությունում ԱՄՆ դեսպանատան քարտուղար Ջորջ Քենանի գրությունից, որը հայտնի է «Երկար հեռագիր» անունով, գրված՝ 1946 թվականի փետրվարի 22-ին: Հեռագիրը ուղղված է ԱՄՆ պետքարտուղարին՝ ԽՍՀՄ պետության բնույթի և քաղաքականության երկար վերլուծությամբ:

...Ռուսները եռանդորեն կձգտեն զարգացնել խորհրդային ներկայությունը և պաշտոնական կապերը այն երկրներում, որտեղ նրանք տեսնում են արևմտյան ուժային կենտրոնների դեմ հակազդելու մեծ հնարավորություններ: Սա վերաբերում է այնպիսի երկրների, ինչպիսիք են Գերմանիան, Արգենտինան, Մերձավոր Արևելքի երկրները և այլն:

...Այն երկրներում, որտեղ առանձին կառավարություններ կանգնած են խորհրդային նպատակների ճանապարհին, ճնշում կգործադրվի նրանց պաշտոնանկության համար: Դա կարող է տեղի ունենալ, երբ կառավարությունները ուղղակիորեն հակադրվում են խորհրդային արտաքին քաղաքականության նպատակներին (Թուրքիա, Իրան), որտեղ նրանք փակում են իրենց տարածքները կոմունիստների ներթափանցման դեմ (Շվեյցարիա, Պորտուգալիա), կամ որտեղ նրանք չափազանց ուժեղ մրցակցում են, ինչպես Անգլիայի Լեյբորիստական[3] կառավարությունը...:

...Մենք պետք է ձևակերպենք և առաջ քաշենք այլ ազգերի համար շատ ավելի դրական և կառուցողական պատկեր այնպիսի աշխարհի մասին, որը մենք կցանկանայինք տեսնել, քան առաջ ենք քաշել անցյալում: ...Շատ ազգեր, առնվազն Եվրոպայում, հոգնած և վախեցած են անցյալի փորձառությունից և ավելի քիչ հետաքրքրված են վերացական ազատությամբ, քան անվտանգությամբ:

Վերջապես մենք պետք է բավարար քաջություն և ինքնավստահություն ունենանք՝ հավատարիմ մնալու մեր սեփական քաղաքական մեթոդներին և մարդկային հասարակության մասին մեր պատկերացումներին: Ի վերջո, ամենամեծ վտանգը, որը կարող է սպառնալ մեզ խորհրդային կոմունիզմի խնդրին դիմակայելիս, այն է, որ մենք կարող ենք նմանվել նրանց, ում հետ բախվում ենք:

Հարց 1. Օգտվելով աղբյուր Ա-ի, աղբյուր Բ-ի տեղեկություններից և Ձեր գիտելիքներից թվարկե՛ք և բացատրե՛ք Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև հարաբերությունների սրման պատճառները (առնվազն երկուսը): Ինչպե՞ս, ո՞ր ոլորտներում էին դրանք դրսևորվում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: Հաղթող պետություններից գերակշիռ դիրք ստացան ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը, որոնք դարձան համաշխարհային քաղաքականության նոր կենտրոններ: Եվրոպակենտրոն աշխարհը մնաց

[3] «Լեյբորիստ» բառը ծագում է անգլերեն Labour (աշխատանք) բառից: Լեյբորիստական կառավարությունը Մեծ Բրիտանիայում ձևավորվում է Լեյբորիստական կուսակցության (Labour Party) կողմից: Այն սոցիալ-դեմոկրատական քաղաքական ուժ է, որը պաշտպանում է աշխատավորների իրավունքները, արդարությունը և պետության ներգրավվածությունը տնտեսության մեջ:

անցյալում, ավելին՝ Եվրոպան ինքը ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև դարձավ ազդեցության ոլորտների բաժանման տարածաշրջան: Ֆաշիզմի դեմ հաղթանակից հետո աճել էր ԽՍՀՄ-ի հեղինակությունը, ազդեցությունը ոչ միայն Եվրոպայում էր այլ նաև Ասիայում: (Տես Աղբյուր Ա-ն՝ Խորհրդային զենքի պատմական հաղթանակների շնորհիվ խորհրդային զինված ուժերը տեղակայված են Գերմանիայի և նախկին թշնամի այլ երկրների տարածքում՝ երաշխիք տալով, որ այդ երկրները կրկին չեն օգտագործվի ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Նախկին թշնամի երկրներում, ինչպիսիք են Բուլղարիան, Ֆինլանդիան, Հունգարիան և Ռումինիան, ժողովրդավարական սկզբունքներով նրանց վերակազմավորման արդյունքում ստեղծվեցին վարչակարգեր, որոնք իրենց առջև խնդիր դրեցին ամրապնդել և պահպանել բարեկամական հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Տե՛ս աղբյուր Բ-ն ... Դա կարող է տեղի ունենալ, երբ կառավարությունները ուղղակիորեն հակադրվում են խորհրդային արտաքին քաղաքականության նպատակներին (Թուրքիա, Իրան), որտեղ նրանք փակում են իրենց տարածքները կոմունիստների ներթափանցման դեմ (Շվեյցարիա, Պորտուգալիա), կամ որտեղ նրանք չափազանց ուժեղ մրցակցում են, ինչպես Անգլիայի աշխատավորական կառավարությունը...:

Խորհրդային բանակի կողմից ազատագրված եվրոպական երկրները շատ արագ ձևավորեցին խորհրդամետ վարչակարգեր, իսկ մյուս երկրներում մեծ թափ էր հավաքել կոմունիստական շարժումը: Սրա հետևանքով եվրոպացիները սոցիալիզմի մասին պատկերացումներում խորհրդանշական էին համարում քաղաքակրթական արժեքները՝ ազատությունը, խաղաղությունը, սոցիալական արդարությունը, ստեղծագործ աշխատանքը: Օգտվելով այս իրավիճակից ԽՍՀՄ ղեկավար Ի. Ստալինը նպաստեց Եվրոպայում և Ասիայում սոցիալիստական նոր պետությունների առաջացմանը:

Արևմտյան կապիտալիստական աշխարհում առաջատար դարձած ԱՄՆ-ն չէր կարող համակերպվել ԽՍՀՄ-ի քաղաքական ազդեցության ծավալման հետ: (Տե՛ս աղբյուր Բ-ն...Ռուսները եռանդորեն կձգտեն զարգացնել խորհրդային ներկայացուցչությունը և պաշտոնական կապերը այն երկրներում, որտեղ նրանք զգում են արևմտյան ուժային կենտրոնների դեմ հակազդելու մեծ հնարավորություններ: Սա վերաբերում է այնպիսի առանձնացված կետերի, ինչպիսիք են Գերմանիան, Արգենտինան, Մերձավոր Արևելքի երկրները և այլն:...Մենք պետք է ձևակերպենք և առաջ քաշենք այլ ազգերի համար շատ ավելի դրական և կառուցողական պատկեր այնպիսի աշխարհի մասին, որը մենք կցանկանայինք տեսնել, քան առաջ ենք քաշել անցյալում:)

Այսպիսով, ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը չկարողացան պահպանել պատերազմի տարիներին ձևավորված համագործակցային մթնոլորտը: Կրկին առաջին պլան մղվեց գաղափարախոսական և քաղաքական հակասությունները, որոնց խորքում ընկած էր երկու գերտերությունների՝ համաշխարհային գերիշխանության հասնելու ձգտումները: Արդյունքում անցան բացահայտ առճակատման: ԱՄՆ-ն և դաշնակից Մեծ Բրիտանիան փորձեցին օգտագործել ամերիկյան միջուկային զենքի մենաշնորհը և ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում անցան բացահայտ սպառնալիքի: Դրա վառ օրինակը 1946թ. մարտի 5-ին ԱՄՆ Ֆուլտոն քաղաքում Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ու. Չերչիլի ճառն է, որն ընդունված է անվանել սառը պատերազմի սկիզբը, որը տևել է մի ամբողջ ժամանակաշրջան՝ 45 տարի:

Ստացվեց, որ երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև հարաբերությունների սրումը, որը բերեց սառը պատերազմի, արտահայտվեց ոչ միայն երկու գերտերությունների, այլ նաև

իրենց ազդեցության գոտում գտնվող եվրոպական և ասիական մի շարք երկրների ռազմական, քաղաքական և տնտեսական ոլորտներում:

Հարց 2. Օգտվելով Ձեր գիտելիքներից՝ նշեք, թե ինչպես էին անդրադառնում ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հակասությունները այլ երկրների վրա: Համառոտ ներկայացրեք նվազագույնը երկու օրինակ:

ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հակասությունների արդյունքում ձևավորվեց երկբևեռ աշխարհ, այն անդրադառնում էր այլ երկրների վրա հետևյալ կերպ:

- ✓ Տնտեսական ոլորտ՝

1947թ. ԱՄՆ-ն ընդունեց Մարշալի պլանը(մշակել է պետքարտուղար Ջ. Մարշալը), ըստ որի երեք տարվա ընթացքում Եվրոպայի 16 երկրներ ստացան 12.4 միլիարդ դոլարի օգնություն: Արդյունքները գոհացուցիչ էին: Ի պատասխան Մարշալի պլանի ԽՍՀՄ-ը 1949թ. ստեղծեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ): Այն ընդգրկում էր Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները:

- ✓ Ռազմական ոլորտ՝

Ստեղծեցին իրենց ռազմական խմբավորումները:
ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 1949թ. հիմնվեց Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ: Բացի ԱՄՆ-ից դրա մեջ էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Բելգիան, Նիդերլանդները, Դանիան, Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Նորվեգիան, Պորտուգալիան, հետագայում ՝ Հունաստանը, Թուրքիան, Արևմտյան Գերմանիան և Իսպանիան: Այն գործում է մինչև այսօր:
Դրան ի պատասխան սոցիալիստական բլեռը 1955թ. հիմնեց Վարշավյան դաշինքը, որին անդամակցում էին ԽՍՀՄ-ը, Բուլղարիան, Չեխոսլովակիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Արևելյան Գերմանիան: Լուծարվել է 1991թ.:
Երկու գերտերությունները ստեղծում ու փորձարկում էին սովորական ու միջուկային զենքի նոր տեսակներ: Սկսվեց սպառազինությունների մրցավազք:

- ✓ Տեղական կամ տարածաշրջանային պատերազմներ՝

Երկու գերտերությունների միջև հակամարտությունը դրսևորվեց նաև տեղական կամ տարածաշրջանային պատերազմներով՝ Կորեական պատերազմ (1950-1953), երբ երկիրը բաժանվեց երկու մասի, այդպիսի ճակատագրի արժանացան Գերմանիան և Վիետնամը: Նմանատիպ 255 պատերազմներ և ռազմական բախումներ տեղի ունեցան:
Այսպիսով, երկրորդ աշխարհամարտից հետո Սառը պատերազմի ժամանակ ուրվագծված երկբևեռ աշխարհակարգի ընթացքում աշխարհը կանգնած էր երրորդ աշխարհամարտի սպառնալիքի առջև, որն ուղեկցվեց մինչև Սառը պատերազմի ավարտը՝ 1991թ.: